

7794

1907

33

4-39

33

Պր. Պրոգրես

ԿԵՂՈՐԵՐ

ԻՆՉՊԻՍ Ի ՍՏԱՅԻՈՒՄ ՇԱՀԸ

ԵՒ

ԻՆՉՊԻՍ ԳԻՋԻՈՒՄ

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Ռուս. թարգմ.

Համլիթուրևան

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

1907 թ.

33

4-39

2017

33
4-39

Պր. Պրոֆ. Բ. Բ. Բ.

12001

ԻՆՉՊԵՍ Է ՍՏԱՅԻՈՒՄ ՉԱՀԸ

ԵՊ

ԻՆՉՊԵՍ ԴԻՋԻՏԱԼ ԶԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ



— I —

— Յովհաննէս, այդ ինչ տեսակ գրքեր ես շարունակ կարդում։

— Գրքերը շատ լաւերն են, Սարգիս ամի. ուզում ես քեզ էլ տամ կարդաս։

— Ինչպէ՞ս կարդամ. ես հազիւ հազ վանդեր եմ կապում։ Այդ հիմա է որ երիտասարդութիւնը ուսում է առնում. առաջները միայն գինեւաններում էինք ժամանակ անցկացնում։

— Այո, այդ ճիշտ ես ասում, Սարգիս ամի, ժամանակը փոխել է։ Բանւոր ժողովուրդը հիմայ առաջւանը չէ. նա հասկացել է, որ պէտք է սովորել, կարդալ, խելօք մարդկանց լսել։ Բոլորը պիտի իմանան, թէ չարիքը ու անարդարութիւն-

նը որտեղից է գալիս, թէ ինչո՞ւ բանւոր ժողովուրդը վատ է ապրում, ո՞ւմ համար է նա աշխատում և ո՞վ է ուտում նրա աշխատանքը: Այդ մասին գիտնականները շատ գրքեր են գրել, և ձեռիս գիրքն էլ գրանցից մէկն է:

— Ահա թէ ինչ! Պէտք է որ լաւը լինի: Ուրեմն դու կամ կարգա ինձ համար, կամ թէ չէ պատմի միջի գրածը:

— Պատմել կարելի է, ինչ կայ որ: Տեսնում ես, Սարգիս ամի, այս գիրքը գրողը պատմում է, թէ ինչպէս են առաջ մարդիկ ապրել և ինչպէս են այժմ ապրում Ռուսաստանում և ուրիշ երկիրներում: Նա ասում է, թէ առաջներում, երբ չկային ոչ թագաւորներ և ոչ էլ կալածատէրեր, բոլոր մարդիկ ազատ էին ու հաւասար: Ամեն մէկը իւր սրտի ուզածն էր անում: Մէկը ձուկն էր բռնում, միւսը որսորդութեամբ էր պարապում, երրորդը հողն էր մշակում... Ամեն մարդ աշխատում էր իր և իւր ընտանիքի համար: Հողագործը հնձում էր արաւ և կերակրւում իւր ընտանիքի հետ: Այն բոլորը, ինչ որ նա վաստակում էր իւր ջուխտ ձեռքերով—պատկանում էր իրեն և գառնում իւր սեպհականութիւնը: Բոլորն էլ կուշտ էին, հագնւած, ամեն մէկը ձեռք էր բերում այն բոլորը, ինչ որ իրեն հարկաւոր էր ու դեռ մի բան էլ աւել էր ֆուում սև օրւայ համար:

47661-աի

Այդպէս երկար ապրում էին մարդիկ, չճանաչելով ոչ կարիք, ոչ հոգս, ոչ հարկ և ոչ էլ տուրք: Բայց ժամանակները փոխւեցին: Երկրի մէջ, ով գիտէ որտեղից, երևացին օտարներ, գէնքերը ձեռներին: Մորեխի պէս վրայ թափւեցին նրանք և սկսեցին ջարդել ու ոչնչացնել պատահածը: Եւ այդպիսով հպատակեցրին մինչ այդ ազատ ու անկախ ապրող խաղաղ ժողովրդին:

Եկւորները հպատակեցրին նրանց գէնքի ոյժով և տիրացան նրանց հողերին:

Եկւորներից մէկը իրեն անւանեց Թագաւոր և հրամայեց որ ամեն տեսակ յարգանքներ մատուցանեն: Նա բերել էր իրեն հետ բարեկամների ու ազգականների մի ամբողջ վոհմակ, որոնցից ամեն մէկը իւր հերթում ունէր իւր բարեկամները ու ազգականները: Եւ ահա այդ վոհմակը սկսում է բաժանել իւր մէջ գրաւած հողը ու հպատակեցրած մարդկանց:

Ամբողջ հողը մինչև վերջին կտորը բաժանեցին, իսկ մարդկանց յայտարարեցին հետևեալ հրամանը. այսուհետև մենք ձեր տէրերն ենք, իսկ դուք մեր նոքարները: Այժմ մեք հողի վրայ պիտի մեզ համար աշխատէք, իսկ որպէսզի քաղցից չը մեռնէք, մենք իրաւունք ենք տալիս շաբաթւայ ընթացքում երեք օր ձեզ համար աշխատելու: Մնացած երեք օրը մեզ համար պիտի աշխատէք:

Վշտացան, արտասուեցին մարդիկ իրենց կորցրած ազատութեան համար—բայց ի՞նչ արած. պէտք էր գործի կաշել, որմհետեւ ապրել էր հարկաւոր: Եւ սկսեցին նրանք շաբաթեայ երեք օրը իրենց համար աշխատել, իսկ միւս երեքը իրենց աղաների համար: Այդպիսով ազատ մարդիկ դարձան ճորտեր: Նրանք աշխատում էին և կերակրում իրենց աշխատանքով աղային: Այդ օրւանից աշխարհիս վրայ սկսեց շահագործումը (երբ որ մէկը ստիպում է միւսին իրեն համար աշխատել), բռնութիւնը և ճնշումը, երկացին տէրեր ու բանւորներ, հարուստներ ու աղքատներ: Այդպէս է եղել մեզ մօտ Ռուսաստանում և ուրիշ երկրներում,

Ազան հարստանում էր, որովհետեւ ամեն մի աշխատաւոր շաբաթեայ ընթացքում տալիս էր նրան երեք օրւայ իւր աշխատանքը: Բանւոր մարդու այն աշխատանքը, որով կերակրւում է ձրիակեր աղան կոչւում է յաւելեալ աշխատանք, իսկ այն արդիւնքները (իրերը, առարկաները) որը նա արտադրում է աղայի համար, կոչւում են յաւելեալ արդիւնքներ: Ճորտերի յաւելեալ աշխատանքը կոչւում է կոռ:

Աղայի մօտ ժողովւում էր զանազան տեսակի շատ բարիքներ—միս, հաց, իւղ և ուրիշ արդիւնքներ: Իւր քէֆի համար ուտելուց ու

խմելուց բացի նա ոչինչ չէր անում: Բայց որովհետեւ փորովդ մէկ միայն կարող ես ուտել, ուստի մնացորդը ստիպւած էր լինում տալ նոյն ճորտերին: Աղաների մէջ կային և այնպիսի ժլատներ, որոնք ափսոսում էին մնացորդները տալ գիւղացիներին. նրանց համար աւելի դուրեկան էր հոտեցնել, փթեցնել ու դէն շալտել, քան թէ գիւղացիներին տալ:

II.

Ազատ մարդկանց մէջ բացի հողագործներից կային և կօշկակարներ, հիւաներ, դարբիններ, դերձակներ և ուրիշ արհեստաւորներ:

Նրանք բոլորն էլ աշխատում էին ապրելու համար: Կօշկակարը կօշիկներ էր պատրաստում, դերձակը շորեր, դարբինը պայտեր, իսկ հիւանը տներ: Բայց այդ բոլոր առարկաները (դրանք կոչւում են աշխատանքի արդիւնքներ) արհեստաւորները չէին կարող գործադրել կերակրի տեղ: Կօշիկները, պայտերը, վարտիկը չեն կարող ուտել—պէտք է ուրեմն փոխարէնը ստանաս հաց, միս, իւղ և ուրիշ ուտելիքներ:

Այդ ժամանակ կօշկակարը հաւաքում է իւր կօշիկները, դերձակը իւր շորերը, դարբինը իւր պայտերը և բոլորն էլ գնում են շուկա (բազար): Այնտեղ նրանք ծախում են իրենց ապրանքները, (իրենց աշխատանքի արդիւնքներ)

ը ը), փոխարէնը ստանում են փող, իսկ այդ փողով առնում այն, ինչ իրենց անհրաժեշտ է: Արհեստաւորը աշխատում էր ոչ միայն իւր, այլ և ամբողջ աշխարհի համար, իսկ իւր ապրանքը ծախում էր ուրիշին — այսինքն աշխատում էր շուկայի համար:

Այն ժամանակ բոլոր մարդիկ աշխատում էին կուշտ լինելու համար: Այն բոլորը, ինչ նըրանք ձեռք էին բերում, ծառայում էր իրենց սեփական ստամոքսին: Գիւղացին հողը մշակում էր, հաց բուսցնում և այդ իւր աշխատանքի արդիւնքն էր, իսկ արհեստաւորը աշխատում էր բոլորի համար և փոխարէնը ստանում հաց, միս և բոլոր անհրաժեշտ իրերը: Բոլորն էլ լի ու կուշտ էին: Բայց երբ ստեղծւեցին աղաներ ու ճորտեր, տէրեր ու բանւորներ — այն ժամանակ ամեն բան փոխւեց:

Լինում էին այնպիսի արհեստաւորներ, որոնք որևէ պատճառով զրկւում էին իրենց գործիքներից: Այն ժամանակ հարուստ վարպետներից մէկը այսպիսի բան էր մտածում. «Կալւածատէրը ստիպում է գիւղացուն շաբաթւայ ընթացքում երեք օր իրեն համար աշխատել. իսկ ես ինչո՞վ եմ կալւածատիրոջից պակաս. ինչո՞ւ ես էլ չփորձեմ այնպէս անել: Բացեմ կօշիկների արհեստանոց ու տեսնեմ զրանից ի՞նչ է դուրս

գալիս»: Եւ ահա նա գնում է շուկա ու անգործիք կօշկակարներ հաւաքում: Բերում է զրանց իրեն մօտ, տալիս է ամեն մէկին մի մի կտոր կաշի, կաղապար (ղալիք), բիզ և ասում. կարեցէք, տղերք, ու զրա համար ամեն մէկդ կըստանաք մի մի ըուբլի:

Իսկ ինքը գնում է պանդոկ (տրակտիր), թէյ խմում ու բարեկամների հետ թուղթ խաղում:

Առաւօտեան ժամը վեցից երգելով մեր կօշկակարները սկսում են իրենց աշխատանքը, իսկ կէսօրին ամեն մէկը պատրաստ ունենում է մի մի շուխտ կօշիկ:

Այն ժամանակ նրանք թողնում են գործիքները, մաքրում կօշիկները և ուղևորւում տիրոջ մօտ: Իսկ նա արդէն պանդոկից վերադարձած տուն, ծանր ու բարակ ճաշում էր:

Մտնում են նրանք նրա մօտ և ասում. պատրաստ է, պարոն, փողը շնորհեցէք:

Կատաղով ինչից տիրոջ ձեռքից գդալը ընկնում է. գժւե՞լ էք, ի՞նչ է. մինչև երեկոյ դեռ շատ ժամանակ կայ:

Կօշկակարները պատասխանում են. մեծապատիւ պարոն, չէ՞ որ կաշին ձեզ արժէ երկու ըուբլի, իսկ մի գոյգ կօշիկը դուք ծախում էք շուկայում երեք ըուբլով. ուրեմն մեր աշխատանքը արժէ մէկ ըուբլի: Տէք մեզ այդ ըուբլին և մենք մեր հաշիւները վերջացրած կը լինենք:

Տէրը զայրոյթից կապտում է ու գոռում.

Ի՞նչ էք զահլա տանում ձեր աշխատանքով. ես վճարում եմ ձեզ փող, վճարում եմ ձեր ոյժի, ճարպիկութեան և հմտութեան համար: Ձե՞ որ ձեր ձեռքերը կօշիկներ չեն, այլ միայն ձեռքեր: Եւ ես վճարում եմ ոչ թէ կօշիկն երբի՝ համար, այլ ձեր ձեռքերի: Ձեր ձեռքերը ստանում են փող, իսկ ես ստանում եմ կօշիկներ: Ձեր կարելը պատկանում է ինձ և դուք պէտք է այնքան կարէք, որքան ես կը հրամայեմ: Է՛հ, ինչ եմ ձեզ հետ երկար խօսում. ձեզ պէս անգործներ շուկայում շատ են թրև գալիս: Դեռ ձեզանից էլ շատ լաւերը կը գտնեմ: Ում համար որ օրը մի բուբլին քիչ է թող գնա, հարկաւոր չէ:

Կանգնում են մեր կօշկակարները, մէկ ոտից միւս ոտի վրայ են յենւում ու վերաւորւած ու զարմացած միայն ծոծրակները քորում:

Սա ի՞նչ բան է, մտածում են նրանք. չէ՞ որ եթէ նա մեզ ստիպէ մինչև երեկոյ աշխատել, մենք մի ուրիշ գոյգ էլ կը պատրաստենք և մէկ մէկ բուբլի էլ կաշխատենք, իսկ այդ փողերը մեր փոխարէն տէրը կ'ստանայ:

Շատ մտածեցին մեր կօշկակարները, բայց մի նոր բան չ'կարողացան մտածել:

Եթէ նրանք հողագործներ լինէին, գոնէ

ուտելու հաց կը ճարէին. բայց կօշկակարներ էին, հացը առնում էին, իսկ դորա համար փող էր հարկաւոր:

Ակամայից պէտք է ծախէին իրենց ու իրենց բանւորական ոյժը:

Եթէ նրանք ունենային իրենց արհեստանոցը, իրենց գործիքները, կարիք էլ չէր լինիլ իրենց շուկայում ծախելու: Նրանք դուրս կը բերէին ծախելու իրենց աշխատանքի արդիւնները. իսկ այժմ ամեն հնարաւորութիւնից զրուկած էին:

Ոչինչ նոր բան չ'մտածեցին մեր կօշկակարները և նորից սկսեցին աշխատել:

Եւ համաձայնեցին նրանք աշխատել ամբողջ օրը մէկ բուբլով: Իսկ տիրոջը հենց այդ էր հարկաւոր:

Երեկոյեան ամեն մէկը տիրոջը տւեց էլի մի մի գոյգ կօշիկ, այսինքն իւր յաւելեալ աշխատանքը, որից նա առանց մատը մատին խփելու ստացաւ մի մի բուբլի և այդ նրա համար, որ ուրիշ տէրը ինքն էր, գործիքները և կաշին պատկանում էին իրեն և ոչ բանւորներին:

Դառն էր բանւորների համար այդ բոլորը, որովհետև նրանք հասկանում էին, որ այդ բուբլիները տիրոջն են ընկնում ձրիապէս, որ կորացած մէջքերով նրանք փող են դիզում տիրոջ համար...

Իսկ այդ ըուբլիները նրանց ինչքան շատ էին հարկաւոր...

Մէկի վարտիկը ծակւել է, միւսը շապիկ չունէ, երրորդի կօշիկները պատառոտւած են, թէկուզ ինքը կօշկակար է։ Այս մէկի կիսն է հիւանդ, որի համար չէր խանգարել միս ու կաթը առնել, այն միւսի տունը մերկ երեխաներով է լիքը, երրորդի մայրն է կոյր, պէտք է կերակրել։ Այսպիսի պայմաններում ստացած մէկ ըուբլով շատ քիչ բան կարելի է անել։

Այդ բոլորը նրանք գիտէին. բայց ի՞նչ կարող էին անել։

Իսկ տէրը նստում էր երեկոյները ինքնաեռի մօտ, բուկիով ու մուրաբով թէյ խմում ու համբիշի վրայ չըխկչըխկացնում։

Ձըխկչըխկացնում է ու քթի տակ ծիծաղում. ամեն մի յիմարից մի մի ըուբլի յաւելեալ արժէք, իսկ տասից ուրեմն տասը ըուբլի։ Այո։ Այս իմ աշխատանքն է։ Ոչինչ, կարելի է ապրել։ Կալածատիրոջից պակաս չենք ապրել։

Քնելու պառկելիս նա մի գոյգ մոմ է վառում ու ծնկաչոք աղօթում.

— Շնորհակալ եմ քեզանից, Տէր, որ Դու օրհնեցիր իմ օրւայ աշխատանքը։

Տասը կօշկակար աշխատել են նրա համար աւելորդ 60 ժամ և այդ նա անւանում է իւր օրւայ աշխատանքը։

— III —

Մեր կօշկակարները աշխատանքի են նրստած ու կարծես թէ ջուրն են քաշած։ Էլ չէ լսում նրանց ուրախ երգը։ Սրտների մէջ կարծես կատուներ են չանդռտում։

Հաւաքւում են երեկոյեան գործից յետոյ մի օրէէ տեղ ու սկսում իրենց դըութեան մասին խօսել։ Ոսում են այն մասին, որ իրենց աւելորդ աշխատանքով ստեղծւած յաւելեալ արժէքը ամբողջովին անցնում է տիրոջ ձեռքը։ Նրանց մէջ կար մի խէլօք, լուրջ պատանի, Սըմբատ անունով։ Բոլորից շատ նա էր կատաղում տիրոջ թալանից։

Երեւակայեցէք, ասում էր նա ընկերներին, թէ մեր տէրը կալածատէր է, իսկ մենք ճորտեր և նա ասէր մեզ. «շաբաթւայ երեք օրը դուք պէտք է կօշիկներ կարէք և ինքներդ ծախէք։ Ամեն մի ջուխտից դուք կաշխատէք մէկ ըուբլի։ Այդպիսով երեք օրում ձեր կարած վեց ջուխտ կօշիկից դուք կաշխատէք վեց ըուբլի։ Ինձնից դուք ստանում էք օրեկան մէկ ըուբլի, իսկ վեց օրում կ'ստանաք վեց ըուբլի։ Ուրեմն մնացած երեք օրը դուք պէտք է ինձ համար ձրի աշխատէք։

Ինչպէս գիւղացին է շաբաթւայ ընթացքում երեք օր կալածատիրոջ համար ձրի աշ-

խատում, այնպէս էլ մենք ենք երեք օր մեր տիրոջ համար ձրի աշխատում: Միթէ սա միևնոյն բանը չէ: Չէ՞ որ սա պարզ է, ինչպէս ցերեկայ լոյսը:

Լսում են ընկերները Սմբատի խօսքերը և մտքներումը պահում: Այդ բոլորը նրանք էլ էին հասկանում, բայց այդպէս արտայայտել չէին կարողանում:

Նրանք տեսնում էին, որ իրենց տէրը նոյնքան է աշխատում, որքան և կալածատէրը, որ նա նոյնպէս պարծենում է իւր հարստութիւնով և երկուսն էլ միասին փորներն են միայն հաստացնում:

Նա քամել է բանւորներից յաւելեալ աշխատանք ու յաւելեալ արժէք ճիշտ այնպէս, ինչպէս կալածատէրը իրեն ձորտերից: Բայց այդ բոլորը նա անում է ճարպիկութեամբ և ոչ էլ այնքան աշքարայ: Կողմից նայողը իսկոյն չէ կարող հասկանալ, թէ բանը ինչու՞ն է: Բոլոր տէրերը խօսում են աշխատավարձի մասին, որը բանւորը ստանում է իրեն աշխատանքի համար: Խօսում են և իրենց շահի մասին: Բայց թէ ինչպէ՞ս է ստացւում այդ շահը, յաւելեալ աշխատանքը, յաւելեալ արժէքը ու թէ ինչպէ՞ս է դիզւում հարստութիւնը, ոչ ոք ոչինչ չէ խօսում: Ու միայն կօշկա-

կարները և ուրիշ բանւորներն են գործի էութիւնը իւր ամբողջ մանրամասնութիւններով հասկանում: Հենց որ հաւաքւում են, իսկոյն սկսում են այդ մասին խօսել:

Տէրը իմացաւ, որ իւր կօշկակարները հաւաքւում են և ինչ որ վտանգաւոր ճառեր արտասանում ու որ ամենից շատ Սմբատն է խօսում ու բանւորներին յուզում—սկսեց մտածել, թէ ինչպէ՞ս անի, որ այդ ճառախօսութիւններին վերջ տրւի, որպէս զի իրեն հարստացնող այդ յաւելեալ աշխատանքը այդպէս յաճախ իւր աչքը չը կոխեն: Դորա հետ միասին նա սկսեց մտածել և այն մասին, թէ արդեօք չէ՞ կարելի ստանալ բանւորներից յաւելեալ արժէք մէկ ըուբլու փոխարէն—ըուբլի ու կէս ու այնպէս, որ նրանք այդ չ'հասկանան:

Երկար մտածեց նա, գիշերները չ'քնեց, հացից կտրեց, շատ մտածելուց նիհարեց և վերջ ի վերջոյ գտաւ:

Մի անգամ ճաշին մտաւ նա արհեստանոց և այսպէս սկսեց խօսել.

— Ահա թէ ինչ կասեմ ձեզ, տղերք ջան: Մինչև այժմ դուք միայն միասին էք աշխատել, կողք կողքի միեւնոյն արհեստանոցում: Ձեզանից ամեն մէկը մի մի ջուխտ կօշիկ սկսած կարել է: Դա կոչւում է ընկերակցութիւն (կօօպերացիա) կամ ընկերակա՛ն աշխատանք:

Այս գիշեր Աստուած օրհնեց իմ այսքան ժամանակայ սրտառուչ աղօթքը:

Ես գտայ մի միջոց, որով կարելի է լաւացնել ձեր դրութիւնը ու թեթեւացնել ձեր աշխատանքը:

Այս օրւանից մենք կանցնենք աշխատանքի բաժանման: Այդ նշանակում է, որ ձեզանից ամեն մէկը պիտի կարէ ոչ թէ մի ամբողջ կօշիկ, այլ նրա մի մասը: Ձեզնից մէկը կտորը կը ձևի, միւսները երեսները կը քաշեն, երրորդը կը կպցնի տակը, չորրորդը կը ղուկը, իսկ դու Սմբատ կը կպցնես միայն ականջները հագնելու համար:

Այդպիսով ձեզանից ամեն մէկը կը վարժւի իրեն գործում և աշխատանքը կը եռայ: Իսկ մեր արհեստանոցը այսուհետև կը լիոյճի ոչ թէ արհեստանոց, այլ մանուֆակտուրայ, իսկ մեր գործը ոչ թէ արհեստաւորական, այլ արդիւնատաճական: Շնորհակալութիւն յայտնեցէք Աստծուն, որ այսքան հեշտացրեց ձեր աշխատանքը:

Վերջացնելով իւր ձառը, տէրը գնաց:

Լսեցին մեր կօշկակարները տիրոջ ասածները և ոչ մի կերպ չ'կարողացան հասկանալ, թէ ինչով է իրենց աշխատանքը թեթեւանում: Նա ոչինչ չասաց այն մասին, որ կաւելացնի ռոճիկներին թէկուզ հենց 20-ական կոպէկներ, կամ

թէ չէ փոխանակ 12 ժամի կաշխատեն միմիայն 10 ժամ: Նա խօսեց աշխատանքի բաժանման մասին. բայց այդ աշխատանքի բաժանումը չէ որ հասցով ուտելու բան չէ: Ինչո՞ւ է ուրեմն աշխատանքի թեթեւութիւնը և իրենց դրութեան բարելաւումը:

Մտածեցին, մտածեցին նրանք, բայց ոչինչ չ'հասկացան: Որոշեցին սպասել: Առաւօտը երեկոյից բարի է. կ'սպասենք կը տեսնենք:

Միւս օրւանից սկսեց նոր ձևի աշխատանքը:

Մէկը ձեռն էր, միւսը կարում, երրորդը մէխերն էր խփում: Սկզբում տարօրինակ էր թւում, բայց յետոյ սովորեցին:

Մի երկու շաբթից յետոյ տէրը կանչեց Սրմբատին իրեն մօտ և խորամանկ ժպտով հարցրեց. «ապա, խելօք գլուխ, մի հաշւիր տեսնեմ այն կօշիկների մէջ, որին դու ականջներ ես կպցնում որքան կայ քո աշխատանքից և որքան յաւելեալ աշխատանքից: Ականջները կպցնելու ժամանակ քո յաւելեալ աշխատանքից որքան է անցել կօշիկներին:

Քարացաւ Սմբատը, չիմացաւ ինչ պատասխանի:

— Այդ ոչ մի կերպ չէ կարելի հաշւի առնել, վերջապէս ասաց նա:

— Հենց բանն էլ դորանումն է, որ հաշւի

առնել չի կարելի, ծիծաղեց տէրը: Այ, հիմայ դու այդ բանը մտքումդ պահիր և ուրիշներին քո ճառերով խելքից մի հանիր:

Ուզում ես աշխատել—աշխատիր, Աստուած քեզ հետ. իսկ տիրոջ աշխատանքի և զանազան յաւելեալ արժէքների հաշիւ պահելը քո գործը չէ: Այդ քո խելքի բան չէ: Իմ շահը պատկանում է ինձ, իսկ ձեր աշխատանքը ձեզ. ուրիշ ոչինչ:

IV.

Այն օրւանից, ինչ տէրը մտցրեց աշխատանքի բաժանում, իրերի դրութիւնը փոխեց:

Շուտով բանւորները այնպէս սովորեցին աշխատանքի այս նոր ձևերին, որ սկսեցին մեքենաների պէս արագ ու մաքուր աշխատել ու ամեն օր փոխանակ առաջւայ երկու հարիւր զոյգ կօշիկների, տէրը սկսեց ստանալ երեք հարիւր զոյգ*): Ապրանքի քանակը աւելացաւ, որովհետեւ արդիւն աւելտական աշխատանքը աւելացել էր աշխատանքի բաժանումից:

*) Եւ մոռացայ քեզ ասել, որ արհեստանոցում աշխատում էր արդէն ոչ թէ առաջւայ պէս տասը բանւոր, այլ ամբողջ հարիւր:

Տէրը յիմար չէր: Նա լաւ էր մտածել, թէ ինչպէս աւելացնի իւր շահը և այն էլ այնպէս, որ ոչ ոք այդ չ'նկատի և չ'հասկանայ:

Եւ սկսեց նա փառաւորնապէս ապրել ու ամեն բարիքներ վայելել: Ուրիշների աշխատանքով ու քրտինքով սկսեց առաջւանից էլ աւել հարստանալ: Շուտով նա իրեն համար տուն էլ առաւ, ձիաներ ձեռք բերեց, որպէս զի ոտով ոչ մի քայլ չանի: Բոլոր ժամանակ սեպհական կառքերով էր պտտում, կնոջը արբէշումի ու մախմուրի շորեր հագցնում: Երեխաների համար ուրիշ երկրներից էր վարժուհիներ ու վարժապետներ բերել տալիս: Իսկ տան միջի շքեղութիւնը ու փարթամութիւնը աննկարագրելի էր—ամեն տեղ հայելիներ, մախմուրի կահ կարասիք, խալիչաներ, ծաղիկներ, նկարներ...

Իսկ բանւորների երեխաները առաջւայ պէս մերկ, կանայք հիւանդոտ, մայրերը կարօտեալ... Իրենց շորերը առաջւայ պէս կարկատաններով, ծակծկւած, իսկ կօշիկների տակը մաշւած...

Աշխատանքի բաժանումից և մանուֆակտուրայից իրենց համար ոչ մի թեթեւութիւն չեղաւ: Նրանց համար ամեն ինչ առաջւայ պէս մնաց...

Իսկ տէրը օր օրի վրայ հարստանում էր ու հարստանում, որովհետեւ յաւելեալ արժէքի քանակը քանի գնում աւելանում էր: Նա շարունակ լայնացնում էր ու լայնացնում իւր գործը,

վարձում էր շարունակ նոր բանւորներ, որոնք դիզում էին նրա համար նորանոր յաւելեալ արժէքներ:

Բանը հասաւ նրան, որ ինչքան էլ նա փող էր ծախսում, ինչքան էլ որ արտասահմանի գինիներ էր խմում, ինչքան էլ որ թանկագին առարկաներ էր առնում, այնուամենայնիւ ոչ մի կերպ չէր կարողանում վերջացնել այն բոլոր փողը, որը ստանում էր նա բանւորներից:

Այդ ժամանակ նրա մտքում ծագեց մի նոր միտք: Նա խէօք մարդ էր և ամեն դժւարութիւններից դուրս գալու ելքը հեշտութեամբ էր գտնում: Այս անգամ էլ նա իւր ցաւին ճար արաւ:

— Է՛յ, դուք, մեծապատիւ ազնւականներ, աղա կալածատէրեր, ասաց նա. ոչնչից ոչինչ դուք չէք հասկանում:

— Դուք փչացնում էք ձեր ճորտերից ըստացած բոլոր յաւելեալ աշխատանքը, դուք բաժանում էք յաւելեալ հացը, յաւելեալ միսը, յաւելեալ գինին, դուք դեռ չէք հասկանում թէ ինչ է նշանակում յաւելեալ արժէք և ինչ կարելի է նրան դարձնել:

— Սովորեցէք ուրեմն ինձանից, թէև ես ազնւականների ցեղից չեմ և ձեզ պէս հազար ու մի գիտութիւններ չեմ սովորել:

— Կօշիկների վաճառումից ես ստանում եմ

ոսկի, միւսը ամանեղէնների վաճառումից է ըստանում ոսկի, երրորդը հագուստներից: Շուկայում ծախւած ամեն մի առարկայի համար ոսկի են վճարում: Ոսկով ամեն բան կարելի է առնել: Ոսկին չի փչանալ հին մսի պէս, չի բորբոսնի հացի և չի մխկիլ իւղի պէս: Նա երբէք չի փչանալ և չի ձկափոխիլ: Նրան կարելի է գի գել: Այժմ ես կ'սկսեմ խնայել ու գիզել: Ինքը Տէրը կանգնացրեց ինձ ճշմարտութեան իսկական ճանապարհի վրայ:

Մենք արդէն իմացանք, որ տէրը չէր կարողանում ծախսել իւր ստացած բոլոր գումարները, որովհետև ստացածը աւելի շատ էր, քան թէ ծախսածը: Եւ անա նա սկսեց գիզել:

Նա առաւ իրեն համար մի երկաթէ ամուր սունդուկ, տեղաւորեց իւր ամենավերջին սենեակում, կողպեց բանալիով ու սկսեց դարսել նրա մէջ այն աւելորդ ոսկիները, որը չ'գիտէր ինչ անէր, որովհետև առանց դրան էլ նա միշտ կուշտ էր ու հարբած, միշտ լաւ շորերով ու կօշիկներով զարդարւած:

Հենց այդ ժամանակ մեր բարեկամ Սմբատը մերձի մահ հիւանդ պառկած էր: Շատ տարիներ էր նա աշխատել տիրոջ համար, ամբողջ առողջութիւնը և ոյժը թողել էր արհեստանոցում, բայց վերջը մնացել էր էլի նոյն աղքատ դրութեան մէջ:

Մի անգամ ձմեռուայ բուք ու բորանին Սմբատը գործից իւր աղքատիկ բնակարանը վերադառնալիս, սաստիկ մրսեց, որովհետեւ շորերը ինչպէս և միշտ վատն էր. վերաբերուն ձկան մորթուց, կօշիկները ծակոտւած... Առաւօտը նա էլ գործի չ'գնաց, իսկ երկու շաբթից յետոյ մեռաւ:

Մեռնելուց առաջ նա կանչեց իւր բոլոր ընկերներին ու ասաց. շատ տարիներ է, որ ես եզան պէս աշխատում եմ: Ես չեմ ունեցել ոչ կին և ոչ էլ երեխաներ: Ես մենակ ինձ համար եմ աշխատել ու այնուամենայնիւ միշտ ոչ կուշտ եմ եղել և ոչ էլ հագնւած:

Բայց մարդ պէտք է աւելին անէ. նա պիտի կերակրէ նոյնպէս և իւր ընտանիքը, կնոջը, երեխաներին: Ես աշխատել եմ աւելի քան հարկաւոր էր իմ գոյութիւնը պահպանելու համար: Իմ աշխատանքով ազատ կարող էր կերակրել մի ամբողջ ընտանիք, եթէ ես ըստ անայի իմ աշխատանքի ամբողջ վարձատրութիւնը: Բայց իմ աշխատանքի աւելորդը — իմ յաւելեալ աշխատանքը իմ ձեռքը չէր ընկնում: Տէրը իւրացրել է այդ աշխատանքը ու պահում է իւր սունդուկներում, ուր բանւորների արիւն քրտինքով վաստակած շատ ոսկիներ կայ ժողոված: Այնտեղ, այն սունդուկներում ձեր երեխաները ու թոռները կը գտնեն իմ ամբողջ ժառանգու-

թիւնը ու թէեւ ես մեռնում եմ առանց երեխաների, բայց ձեր որդիքը պիտի լինեն այդ հարստութիւնների ուղղակի ժառանգները:

Մենք բոլորս աշխատում ենք միասին, բայց այժմ ոչ ոք, նոյն իսկ Աստուած չէ կարող հաշի առնել, թէ ինչքան է իմ բաժինը և ինչքան ձերը: Ոչ ոք չ'գիտէ, թէ ուր է գնում մէկի կամ միւսի յաւելեալ աշխատանքը. սակայն այդ դեռ չէ նշանակում թէ յաւելեալ աշխատանք չ'կայ, թէեւ մեր տէրը աշխատում է համոզել մեզ դուրս մէջ:

Մենք բոլորս աշխատում ենք միևնոյն արհեստանոցում, բայց մենք չ'գիտենք, թէ մեզանից ամեն մէկը որքան արժէք և որքան յաւելեալ արժէք է ստեղծել: Մենք գիտենք միայն, որ մենք բոլորս ենք ստեղծում ամբողջ արժէքը և ամբողջ յաւելեալ արժէքը, որը նոյնպէս ընդհանուր է, ինչպէս և մեր քրտինքը, մեր ցաւը, կարիքը ու հոգսը: Ուրեմն թող որ նա միայ ընդհանուր և թող նրանցից միասին օգտւեն մեզանից յետոյ ապրող մեր որդիները ու թոռները: Այն բոլորը, ինչ որ բռնի կերպով խլած է բանւորից, այն բոլորը, ինչ նա ձեռք է բերել ծանր, տանջալի աշխատանքով, որպէսզի տէրերը անհոգ ապրեն ու շարունակ աբրեշումի ու մախմուրի մէջ պճնւեն — աշխատաւորների ձեռքով վաստակւած այդ

բոլոր բարեքները պիտի վերջ ի վերջոյ նորից դառնան աշխատաւորինը: Կուեցէք դորա համար, իմ բարեկամներ, ամուր կանգնեցէք մէկ մէկու համար, միացէք և դուք կ'հասնէք ձեր նպատակին: Կը գայ մի օր, երբ կեղեքիչ տէրերի ձեռքով խլւած մեր բոլոր վաստակը նորից կը դառնայ մեր սեպհականութիւնը:

Այս խօսքերի հետ Սմբատը հոգին աւանդեց, իսկ ընկերները նորա վերջին խօսքերը սրբութեամբ պահեցին իրենց սրտերի մէջ:

Մ.

Իսկ տիրոջ սուսգուկները մէջ ոսկին աւելանում էր հա աւելանում: Բանւորները ամեն օր ստեղծում էին նոր արժէքներ, իսկ տէրը ստացած փայլուն ոսկիները դարսում էր իւր խորհրդաւոր սուսգուկներում:

Նրա մօտ կային և շատ ձրիակերներ ու աման լիզողներ, որոնք սկսեցին նրան գովաբանել:

— Տեսէք նա ինչպիսի բարեգործ մարդ է, ասում էին նրանք: Տեսէք ինչպիսի հարստութիւն է դիզել: Ահա թէ ունից պէտք է սովորել ու օրինակ վերցնել: Ահա թէ ով է իւր երեխաների մասին հոգ տանում:

Եւ տէրերը սովորում ու օրինակ էին վերցնում նրանից: Շուտով նրանք էլ սկսեցին դի-

զել և նրանց սուսգուկներն էլ լցեցին ոսկիներով: Խնայողութիւնը սկսեց համարւել մեծ բարեգործութիւն: Նրանք հաւաքում, խնայում էին այն աւելորդները, որը չէին կարողանում ոչ ուտել, ոչ խմել, ոչ շռայլել: Այդ այն աւելորդներն էին, որոնք բանւորների կոշտացած ձեռքերից առատօրէն թափւում էին իրենց մօտ:

Նրանք խնայողութիւն էին անում չ'զըրկելով իրենց ոչ մի բանից, ժողովում էին այն, որը չ'գիտէին թէ ինչ անեն, բայց ոչ ոք այդ չէր նկատում և մեր բարեգործներին շարունակում էին գովաբանել: Վաճառականի, աղայի առաջ սկսեցին բոլորն էլ գլխարկներ հանել: Ամեն տեղ զիջում էին առաջին շարքերը, որովհետեւ նրան հաշւում էին ոչ միայն հարուստ, այլ և բարեգործ մարդ:

Մարդկանց գլուխներում ամեն բան խառնւեց ու շփոթւեց:

Հին ժամանակ հողագործը, որը աշխատում էր իւր վարելահողի վրայ, կերակրւում էր իւր ձեռքերի աշխատանքով. իսկ այժմ աղային, վաճառականին, գործ ձեռնարկողին են անւանում «բանւորներին կերակրող»: Նրան անւանում են կերակրող այն մարդկանց, որոնք կերակրում են նորան . . .

Առաջւայ հողագործը ասում էր. հացը ես եմ բուսցրել, նա իմն է, ուստի ես էլ նրան

կուտեմ: Իմ աշխատանքի արդիւնքը պատկանում է ինձ—նա իմ սեփականութիւնն է:

Իսկ վարձու բանւորը ասում է. իմ աշխատանքի արդիւնքը—իմ տիրոջ սեփականութիւնն է: Նա դրան դարձնում է ոսկի, փող, իսկ նրա մի մասը տալիս է ինձ, որով և ես հաց եմ առնում:

Ճորտական գիւղացին գիտէր, որ շաբաթւայ երեք օրը նա կարող էր աշխատել իրեն համար, իսկ միւս երեք օրը նա պիտի աշխատէր կալւածատիրոջ համար: Երեք օրւայ յաւելեալ աշխատանքը, իւր ամբողջ յաւելեալ արդիւնքը, որը ձեռք էր բերել այդ երեք օրւայ ընթացքում նա տալիս էր իւր տիրոջը: Նորա ձեռքերը աշխատում էին թէ իւր և թէ իւր տիրոջ ստամոքսի համար: Ի՞նչ պիտի պատասխանէ վարձու բանւորը, եթէ ինքը իրեն հարց տայ.

Ո՞ւմ համար եմ ես աշխատում: Ես աշխատում եմ իմ տիրոջ համար: Սակայն իմ կարած կօշիկներից նա ուղղակի չի օգտուում, նա դուրանց չէ հագնում: Դրանցից օգտուում են բոլորը ու ամենքը—այսինքն հասարակութիւնը:

Բայց միաժամանակ ես աշխատում եմ և ինձ համար: Ի՞նչքան է ուրեմն իմ աշխատանքի արդիւնքից տիրոջն բաժին ընկնում, ի՞նչքան հասարակութեանը և ի՞նչքան ինձ:

Իմ պատրաստած կօշիկները ձեռքիցս դուրս

գալով նորից իսկոյն իբրև ուտելիք չեն ծառայում իմ ստամոքսին, ինչպէս առաջւայ հողագործի հացը: Նա հասնում է տիրոջ ձեռքը, իսկ նրա ձեռքից հասարակութեան ձեռքը — շուկան: Այնտեղ կօշիկները դառնում են փող: Հասարակութեան փողը հոսում է տիրոջ գրպանը և նրա մի մասը միայն այնտեղից ընկնում է ինձ բաժին:

Բայց այդ ճանապարհորդութեան ժամանակ իմ աշխատանքից ինչքան է բաժին ընկնում զանազան միջնորդների:

Ես տեսնում եմ, որ բոլոր տէրերը ոչինչ չանելով հարստանում են և շահուում, իսկ ես ինչպէս տաժանակիր աշխատելով մնում եմ նոյն աղքատ դրութեան մէջ:

Ինչո՞ւ է այդ այդպէս և ինչպէ՞ս է այդ կատարւում:

Այդ հարցերին ամեն բանւոր չէ կարող պատասխան տալ, իսկ որպէսզի կարելի լինի հասկանալ ու բացատրել այն բոլոր երևոյթները, որ կատարւում են մեր շուրս կողմը, պետք է կարդալ ու սովորել—և այն ժամանակ ամեն բան կը պարզւի ու հասկանալի կը լինի: Սակայն անցնենք գործին:

VI

Սմբատի մեռնելուց մի քանի տարի յետոյ մեռաւ և տէրը:

Մեռնելուց առաջ նա կանչեց իւր երեխաներին ու ասաց.

— Ես մեռնում եմ, գաւաղներս, բայց դուք ապրեցէք, որովհետեւ ձեր կեանքը ամբողջովին դեռ առաջ է: Ես մեռնում եմ հանգիստ խղճով, որովհետեւ ձեզ ապահոված եմ թողնում: Ես խորապէս հաւատում եմ և ապաւինում Աստծուն, որ դուք երբէք չը պիտի աշխատէք, որ դուք ձեր ամբողջ կեանքը պիտի կարողանաք ապրել բաղդաւոր ու հանգիստ, եթէ միայն հետեւէք իմ օրինակին և կարողանաք յաջողութեամբ շարունակել իմ սկսած գործը: Ես իմ գործը սկսել եմ մի փոքրիկ արհեստանոցով, ուր աշխատում էին միայն տասը բանւոր և որոնցից ես ստանում էի օրեկան միայն տասը բուբլի շահ:

Մի տարուց յետոյ ինձ մօտ աշխատում էին արդէն քսան բանւոր, որից և շահս կրկնապատկւեց: Երկու տարուց յետոյ աշխատում էին երեսուն բանւոր, իսկ յետոյ էլի աւել: Մի քանի ժամանակից յետոյ ինձ մօտ աշխատում էին արդէն հարիւր բանւոր:

Աստուած միշտ օգնել է իմ նախաձեռնութիւնները: Ես երբէք կարիք չեմ գգացել և ոչ մի բանից ինձ չեմ զրկել. դուք այդ գիտէք, գաւաղներս: Այն, ինչ դուք կամեցել էք, միշտ եղել է: Ձեր և ոչ մի ցանկութիւնը անկատար չէ մնացել:

Այս խօսքերի հետ հօր աչքերում արտասուք երևացին, իսկ որդիքը, որ մինչև այդ շնորհակալութեամբ նայում էին վրան, թեքւեցին ու ձեռքը համբուրեցին:

Նա շարունակեց. այն օրւանից, ինչ ես մտքի աշխատանքի բաժանումը, բանւորները սկսեցին աշխատել ինձ համար էլ աւելի: Ահա այդ ժամանակից ես սկսեցի ժողովել ձեզ համար ոսկիներ և դուք տեսնում էք, թէ որքան եմ ես կարողացել դիզել:

Ձեռքի թեթև շարժումով նա ցոյց տւեց մահճակալի դիմաց շարւած մի շարք սունդուկները:

Ես ձեզ այս բոլոր ոսկիները ժառանգութիւն եմ թողնում. տիրեցէք և օգտւեցէք: Շարունակեցէք իմ սկսած գործը, դիզեցէք ձեր ապագայ երեխաների համար բարիքներ, որպէսզի նրանք էլ երբէք կարիք չ'գգան աշխատելու:

Մեզ կերակրելու համար կան բանւորներ, որոնց ինքը Աստուծն է հրամայել ծառայել իրենց տէրերին:

Ամեն մի աշխատանք շահ է բերում, բայց երբ ինքտ ես աշխատում, հիւանդոտ ես դառնում, հոգնում ու աղքատանում:

Ստիպեցէք միւսներին աշխատել ձեզ համար և դուք ձեռք կը բերէք առողջութիւն, ոյժ և հարստութիւն: Վեց ժամայ ընթացքում մարդ ձեռք է բերում այնքան, որքան անհրաժեշտ է իրեն կերակրելու համար: Այն բոլորը, ինչ որ ձեռք են բերում ձեր բանւորները վեց ժամայ ընթացքում, այդ բոլորը օրավար ձի անւան տակ տւէք իրենց, որպէսզի սովից չը կոտորւեն և կարողանան շարունակ ձեզ համար աշխատել: Ստիպեցէք նրանց 12 մինչև 15 ժամ աշխատել. այդ կը տայ ձեզ 6 մինչև 9 ժամայ ամենօրեայ յաւելեալ աշխատանք և այդ յաւելեալ աշխատանքը կը պատկանէ ձեզ ձիշտ այնպէս, ինչպէս կոոր կալւածատիրոջը: Բայց այդ մասին երբէք ոչ ոքի չասէք:

Այն գանձը, որը ես թողնում եմ, գումարւել է յաւելեալ արժէքներից — իմ բանւորների յաւելեալ աշխատանքից: Շատացրէք նրանց թիւը և դուք կը դառնաք երկրի թագաւորները. բոլորն էլ կը սողան ձեր ոտքերի տակ ու կը կատարեն ձեր բոլոր ցանկութիւնները, որովհետև ոսկին հզօր ոյժ է. ոսկով կարելի է ամեն ինչ առնել:

Իսկ ամենազլխաւորը — այնպէս պահեցէք

ձեր բանւորներին, որ նրանք հնազանդ լինեն. թոյլ չը տաք, որ սովորեն, կարգան ու դատեն, որովհետև նրանց համար դա թոյն է:

Պահեցէք նրանց մթութեան մէջ, այն ժամանակ նրանք լուռ կաշխատեն ու ձեզ կը համարեն իրենց բարերարները, որովհետև դուք էք նրանց հաց տալիս:

Այդ բոլորին հասնելը շատ հեշտ է: Պէտք է ստիպել նրանց աշխատել ինչքան կարելի է շատ, բայց օրական ոչ պակաս քան 12 ժամ: Այն ժամանակ սովորելու, կարգալու ու խօսակցելու համար ազատ ժամանակ չի մնալ: Նրանք կը մնան մութ և հետևապէս հնազանդ ստրուկներ:

Յիշեցէք, զաւակներս, այն բոլորը, ինչ որ ձեզ ասացի: Դուք ծնւել էք ոչ թէ աշխատանքի, այլ կեանքի քաղցրութիւնները վայելելու համար. նրա համար, որ ամեն բանի տիրանաք ու ձեր ուղածի պէս կարգադրէք: Ձեզ մօտ սարսափելի ոյժ կայ — դա ոսկին է և աշխարհիս ամեն մի բանն էլ պէտք է ձեզ հնազանդ ու մատչելի լինի:

Այս խօսքերի հետ նա աչքերը խփեց ու շրթունքները ընդմիշտ փակեց...

VII

Որդիքը ողբացին հօր մահը, ձոխ թաղում սարգեցին, մի քանի հազար ռուբլիանոց մա-

հարձան կանգնեցրին, իսկ եկեղեցում հոգեհանգիստ կատարելիս խեղճերին ու աղքատներին բաժանեցին ամբողջ հարիւր բուլբի:

Երբ որ տխրութիւնը մի քիչ անցաւ, սկսեցին մտածել, թէ ինչպէս վարւեն իրենց ժառանգութեան հետ:

Նրանք նստել էին ոսկով լի սունդուկների վրայ ու ապուժ. Աստուած հայրիկի հոգին լուսաւորի, տեսէք ինչ մեծ հարստութիւն է թողել. ամբողջովին մեզ համար է աշխատել ու մեզ համար մտածել: Ճիշտ ասած, անգնահատելի սիրտ է ունեցել: Մենք պէտք է սրբութեամբ կատարենք նորա վերջին կամքը ու գնանք նրա ցոյց տւած ճանապարհով:

Մենք պէտք է շատացնենք մեր գանձը: Բայց եթէ մեր ոսկին այսպէս շարունակ սունդուկումը թողնենք, երբէք չի շատանալ ու միշտ էլ մեռած կը մնայ: Մենք պէտք է այնպիսի միջոցներ մտածենք, որ նա կենդանանայ, կարողանայ շատանալ, աճել ու մեծանալ:

Շատ մտածեցին նրանք, թէ ինչպէ՞ս դիմեն իրենց գանձի շատացման գործին, բայց յարմար ոչինչ չը կարողացան գտնել:

Նրանք զեռ անփորձ էին ու երիտասարդ և չը գիտէին ինչպէս սկսել գործը:

Հենց այդ ժամանակ շուկայում երևացին մեքենաներ (մաշինաներ), որոնցով ամեն մի

արդիւնք կարելի էր պատրաստել աւելի լաւ, մաքուր ու արագ:

Ժառանգները տեսան և ուրախացան:

— Այ, մեր գանձը շատացնելու հրաշալի միջոց, ասացին նրանք:

Մենք կառնենք այդ մեքենաները, կ'ստիպենք նրանց գործել և նրանք կ'ստեղծեն մեզ համար յաւելեալ արժէքների ամբողջ լեռներ:

Նրանց ուրախութեանը չափ չը կար:

Նրանք առան զանազան գործող, մանող և այլ մեքենաներ: Կառուցին հսկայական շէնքեր ու տեղաւորեցին այնտեղ այդ մեքենաները: Յետոյ կանչեցին քահանային, մալթանք կատարեցին, օրհնած ջրով օծեցին տունը, մեքենաները ու սկսեցին սպասել:

Որովհետեւ նրանք անփորձ էին ու երիտասարդ, կարծում էին թէ մեքենաները իրենք իրենց պիտի ստեղծեն արդիւնքը: Նրանք կարծում էին թէ արժէքները (մեքենաները) կարող են իրենք առանց կողմնակի օգնութեան ստեղծել ուրիշ նոր արժէքներ (զանազան օգտակար առարկաներ. թելեր, կօշիկներ, հագուստներ և այլն):

Ամեն օր գնում էին մեքենաներին նայելու: Պտտում էին չորս կողմը, շօշափում էին ու ըստ պատում, թէ երբ այդ մեքենաները լոյս աշխարհ կը բերեն Աստծոյ տւած արդիւնքները, որը

պիտի ծախէին և փոխարէնը ոսկի ստանային։
Բայց մեքենաները կանգնած էին անշարժ,
անշունչ, առանց որևէ արդիւնք արտադրելու։
Ժառանգները յուսահատւեցին ու ընդճե-
ցին։

Կորան մեր ոսկիները, արտասուում էին նը-
րանք. կորաւ հայրական ժառանգութիւնը։ Այս
լինչ արինք մենք։ Եթէ հայրիկը իմանար մեր
այս յիմարութեան մասին, երևի գերեզմանում
կսկիծից շուռ կը գար։

Ու օր օրի վրայ աւելի էին տխրում։

Իրենց անփորձութիւնից նրանք չէին հաս-
կանում, որ ամեն մի արժէք ոչ այլ ինչ է,
եթէ ոչ միմիայն արժէք։ Նրանք չգիտէին, որ
արժէքը ինքը իրեն չէ կարող ստեղծել յաւել-
եալ արժէք։

Մի անգամ եկաւ նրանց մօտ մի գիտնական
մարդ։ Ժառանգները սկսեցին գանգատել նրան,
թէ ինչպէս են միտել իրենց համարեայ թէ ամ-
բողջ ժառանգութիւնը, առել մեքենաներ, կա-
ռուցել շէնքեր յուսալով որ մեքենաները պէտք
է ստեղծեն նոր հարստութիւններ։ Ու բանից
դուրս է եկել, որ այդ բոլորը իզուր ծախսեր են
եղել և ուրիշ ոչինչ։

Գիտնականը ծիծաղեց ժառանգների յիմա-
րութեան վրայ և ասաց. ինչ հիանալի մարդիկ
էք, ճշմարիտ։ Չէ որ մեքենան մեռած ա-

ռարկայ է. ուրեմն ինչպէս էք կամենում որ
նա ձեզ որևէ գործ կատարի։ Դուք պէտք է
նախ և առաջ շարժողութեան մէջ ձգէք
նրանց, դուք պէտք է ինքներդ ստեղծէք
արժէքը։ Ապա մօտեցէք և սկսեցէք աշխա-
տել... Միայն մարդկային ոյժն է ստեղ-
ծում արժէք։

Բայց տիրոջ որդիքը բարկացան ու սկսեցին
զուռալ նրա վրայ.

— Դու խելագարւե՞լ ես, ինչ է։ Մենք աշխա-
տենք։ Մենք ծնւած օրից դեռ չենք աշխատել և
աշխատելու համար չէ որ մենք ծնւել ենք։ Դրա
համար կան բանւորներ—մերկ խաժամուժ ամ-
բոխ, որոնք չունեն ոչ տուն, ոչ տեղ, որոնց
Աստուծ ստեղծել է հէնց նրա համար, որ մեզ
համար աշխատեն։ Եւ ողորմածհոգի մեր հայրի-
կըն էր այդպէս ասում։ Եթէ իսկապէս մեքենա-
ների վրայ մարդիկ պիտի աշխատեն, մենք կը-
գանենք ինչքան ուզէք. հարկաւոր է միայն մի
անգամ ձայն տալ։ Իսկ դու, անկիրթ պարոն,
կորիք այստեղից, քանի դեռ չես ծեծւել և չը-
համարձակւես միւս անգամ քիթդ այստեղ ցոյց
տալ։

Այս խօսքերի հետ նրանք բռնեցին գիտնա-
կանի շինքից ու դուրս ձգեցին։

VIII

Շուկայում մեքենաները երեսացած ժամանակամիջոցում, կալւածատէրերը արգէն սովորել էին ծախել ճորտերի ստեղծած յաւելեալ արգիւնքները, իսկ այդ վաճառումից գոյացած ոսկիները դիզել:

Իսկ որովհետեւ նրանց ցանկութիւնն էր դիզել որքան կարելի է շատ ոսկի, ուստի ամեն կերպ աշխատում էին քամել իրենց ճորտերից որքան կարելի է շատ յաւելեալ աշխատանք: Դորտ համար նորանք առանց խղճահարութեան ստիպում էին գիւղացիներին աշխատել համարեայ թէ ամբողջ օր ու գիշեր: Չարչարում էին տանջում նրանց, իսկ երբ որեւէ կերպ մեղանշում էին — ծեծում, կիսամեռ զրութեան էին հասցնում:

Այն ժամանակ գիւղացիները ոյժից վեր աշխատանքից ու կալւածատէրերի անգութ վերաբերմունքից տանջւած, սկսեցին թողնել իրենց տները ու դաշտերը ու քաղաք փախչել, աշխատելով իրենց տանջողներից ծածկել:

Քաղաքում հաւաքւում էին գիւղացիների ահազին խմբեր, որոնք օրն ի բուն թափառում էին առանց հացի ու գործի:

Մեքենաների տէրերը կանչում էին նրանց իրանց մօտ ու այսպիսի ճառ կարդում գլխներին. դուք հիմայ ազատ մարդիկ էք: Դուք ընդմիշտ ազատուել էք ձեր կալւածատէրերի ճնշումից ու շահագործումից: Այժմ ոչ ոք ձեզ վրայ կարգադրութիւն անել չէ կարող և դուք կարող էք ձեզ հետ այնպէս վարւել, ինչպէս կուզէք:

Եթէ կամենաք, կարող էք քաղծից ազատ կոտորւել մի որեւէ փոսում կամ հէնց ուղղակի փողոցում — ոչ ոք ձեզ խանգարել չէ կարող:

Բայց եթէ կամենաք, կարող էք և օրեկան 50 կոպ. աշխատել մեզ մօտ ֆաբրիկում, մեքենայի մօտ: Որը ձեզ աւելի է դուր գալիս, այն էլ արէք: Զուկեցէք որը կամենում էք: Այդ միանգամայն ձեզանից է կախւած:

Իհարկէ, քախած, ցնցոտիներով, գիւղացիները գերադասեցին ծախել իրենց ձեռքերը — իրենց բանւորական ոյժը օրեկան գոնէ 50 կոպ., քան թէ մեռնել քաղծիժ փողոցում, կամ մի որեւէ փոսում:

Զնայած այն ամեն տեսակ «ազատութիւններին», որոնց ժառանգները այնպէս գովաբանում էին, նրանց համար ընտրութիւն չեղաւ: Նրանց առաջ կանգնած էր քաղծաց կեանքից առաջացած մահւան դաժան սոււերը և նրանք կսկիծով «ինքնակամ» ֆաբրիկանտի հետ պայ-

մանադրութեան մէջ մտան, համոզւած լինելով, որ օրական 50 կոպ. նրանք իրենց ընտանիքով երբէք չ'պիտի ինեն կուշտ ու հազնւած: Բայց... քաղցը իրենց եղբայր չի: Նրանք ընդունեցին այդ առաջարկը ու գործի կ'աւան:

Նւ ահա, երբ կենդանի, բանւոր մարդիկ կանգնեցին մեքենաների մօտ, կատարւեց մի հրաշք:

Մեքենաները շունչ ստացան: Նրանք սկսեցին շարժւել: Շարժւեցին անիւները, պտտեցին իլիկները շառաչեցին մանելու ուստայները: Փաբրիկան լցւեց աղմուկով ու զղրղիւնով, նրա ամեն անկիւններում կեանքը սկսեց եռալ: Վուշը ու բուրդը դառնում էին թել, իսկ թելը իսկոյն դառնում էր հիւսւածք: Հիւսւածքները սպիտակացրին, գոյն տւին և նրանք դառան մահուդ ու կտաւ:

Նւ երբ երեկոյան տէրերը սկսեցին հաշուել օրւայ ելքը ու մուտքը, տեսան որ այժմ ունեն 500 ր. աւելի արժէք, քան առաւօտեան, մինչև գործը սկսելը: Կամ այլ կերպ ասած, այդ օրը նրանք ստացել էին իրենց բանւորներին աշխատանքից 500 ր. յաւելեալ արժէք:

Նրանցից մէկը ասաց. սակայն ինչ չեն կարող անել մարդկային ձեռքերը. 200 մարդ մի օրում աշխատել են 500 րուբ. հրաշք է, ճշմարիտ, հրաշք:

Այ, հիմայ հայրիկը երևի երկնքից նայում է մեզ վրայ և ուրախանում: (Նրանք հաւատացած էին, որ իրենց հայրը այնպիսի արդար կեանք վարելուց ու այսքան մեծ հարստութիւն զիղելուց յետոյ անպատճառ արքայութեան մէջ կ'ընկնի:

Բանւորները նոյնպէս տեսան, որ մի օրում տերերի համար լեռան չափ արդիւնքներ են ստեղծել, իսկ իրենք դրա մի չնչին մասը միայն ստացել: Նրանք այդ անարդարութիւնը տեսան ու վշտացան:

Այն ժամանակ նրանցից մէկը, որ աւելի քաջ էր, գնաց ժառանգների մօտ ու ասաց. տէք մեզ մեր 500 րուբ., չէ որ նրանց ստեղծել են մարդկային ձեռքերը, մեր կոշտացած բանւորական ձեռները:

Տէրերը վախեցան ու սկսեցին նրան բացատրել:

Այդ 500 րուբ. ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեքենաների եկամուտը, հասկանում ես: Իսկ ձեր ձեռքերը այստեղ ինչացո՞ւ են: Այդ մեքենաներն են ստեղծում արդիւնքներ, իսկ դուք միայն ծառայում էք նրան ու եթէ չ'լինէին մեքենաները, չէին շինիլ և այդ արդիւնքները: Այսպէս ասացին նրանք բանւորներին, թէ և քիչ առաջ նրանք համոզւել էին, որ մեքենաները իրենք իրենց ոչ մի արժէք

չեն կարող ստեղծել, որովհետեւ առանց մարդկային ոյժի, առանց աշխատանքի նրանք մեռած են և անշարժ.

Բայց նրանք աշխատում էին համոզել բանւորներին հակառակը, որովհետեւ ճիշտ ասելը ձեռնառու չէր: Նրանք յիշում էին հօր վերջին խօսքերը որը ասել ու պատւիրել էր, որպէսզի բանւորներին մթութեան ու ապիտութեան մէջ պահեն: Նրանք աշխատում էին մթացնել ու պղտորել բանւորների միտքը, որպէսզի նրանք ունին չ'կարողանան հասկանալ ու մտածել:

Տէրերը այսպէս ասացին. — Մեքենաները, հասկանում ես, այդ մի առանձին արժէք է. նա կոչւում է կապիտալ (գրամագլուխ): Իսկ կապիտալը այնպէս է ստեղծւած, որ նա ինքը իրեն, առանց կողմնակի օգնութեան կարող է շահ բերել: Դա կապիտալի էութիւնն է:

Այդ ի՞նչ տեսակ բան է «էութիւնը», հարցրին բանւորները: Ասում ես այն ոյժը, որը ստեղծում է ձեզ համար յաւելեալ արժէք գործընում է ոչ թէ մեր ձեռքերի ու մեր աշխատանքի, այլ հէնց այդ «էութեան» մէջ, չէ՞. կարծեմ ճիշտ եմ հասկացել: — Միանգամայն ճիշտ է, պատասխանեց տէրը: Էութիւնը դա կապիտալի մէջ է գտնւում և միայն դրա միջոցով կարող է կապիտալը ինքը իրեն շահ բերել: Էութիւնը ոչ կարելի է տեսնել, ոչ

կարելի է շօշափել, բայց որ նա կայ—դա փաստ է և ամեն ոք, ով կապիտալի տէր է, նրանից շահ է ստանում:

Այդպէս էին առաջ տէրերը իւզում բանւորների գլուխը, այդպէս իւզում են նրանք և այժմ:

Բայց և այնպէս նրանց յաջողեց համոզել շատերին իրենց խօսքերի ճշտութեան մէջ և նրանք լուռ ու հնազանդ, խոնարհւելով ամենաւարդ կապիտալի առաջ գնացին աշխատելու: Բայց շատերը հասկանում էին, որ տէրերը խաբում էին իրենց, անլուռ բողբոջում էին իրենց դառը վիճակի դէմ, սակայն ոչինչ չէին կարողանում անել:

Այդպէս տարիները անցնում էին տարիների յետեից, բոլորում էին տասնեակ տարիներ, իսկ բանւոր ժողովուրդը ֆաբրիկաներում ու գործարաններում շարունակում էր ստեղծել իրեն շահագործողների համար անթիւ հարստութիւններ:

IX.

Ինչքան շատ է չարշարւում բանւորը, այնքան աւելի է հարստանում ֆաբրիկանաւոր կապիտալիստը:

Բանւորը բացի իւր խղճուկ աշխատավարձից ոչինչ չունէ, որի չափը սովորաբար որոշում է տէրը համաձայն իրեն ցանկու-

թեան: Ու միշտ էլ ստացած աշխատավարձը հազիր է բաւականանում մի կիսաքաղցած կեանք քարշ տալու համար:

Բանւոր ժողովուրդը իրեն ստեղծած արդիւնքներից ստանում է աշխատավարձի անւան տակ նրա մի չնչին մասը միայն: Իսկ բանւորների յաւելեալ աշխատանքը ու յաւելեալ արժէքը տէրերը ժողովում են ու դիզում իրենց մօտ: Այդ յաւելեալ արժէքից նրանք կառուցում են տներ ու ֆաբրիկաներ, առնում են մեքենաներ, լայնացնում են իրենց արդիւնաբերութիւնը, ստանում են նոր յաւելեալ արժէքներ, էլի են կառուցում նոր ֆաբրիկաներ ու այդպէս անվերջ:

Նրանց հարստութիւնը աճում է ոչ թէ օրերով, այլ ժամերով: Նրանց մէջ կան շատ այնպիսիները, որոնք չգիտեն նոյն իսկ, թէ ինչքան հարստութիւն ունեն:

Եւ այդ բոլորը ստեղծել է յաւելեալ աշխատանք: Բանւորը իրեն աշխատավարձով գնում է շուկայ ու գնում իւր ստեղծած անթիւ արդիւնքներից մի քանի աննշան փշրանքներ միայն: Նա կառուցանում է հսկայ շքեղ տներ, մեծ մեծ լուսամուտներով, պարկետե յատակով և էլեքտրական լուսաւորութեամբ, իսկ իւր և իր ընտանիքի համար վարձում է մի գեանայարկի ողորմելի որջ, բակի յետևում, որևէ կեղտահորի մօտ, ուր նոյն-

իսկ արեգակը չէ վստահանում նայել, այնքան կեղտոտ է ու դժւելի:

Այնտեղ ապաստանում է նա իւր ընտանիքի հետ, այնտեղ անց է կացնում նա իւր ամբողջ կեանքը և նրա երեխաները մեծանում են գունատ, վտիտ ու թօշնած: Նրանք երբէք չեն տեսնում արեգակի երեսը, չեն ունենում ոչ թարմ օդ և ոչ էլ կուշտ կերակուր: Բանւորները մեղուների պէս պատրաստում են մեղրահացեր, բայց իրենք չեն օգտւում նրանցից: Նրանք աշխատում են ֆաբրիկանաւի, կալածատիրոջ համար, իսկ իրենց ստեղծած անշափ մեղրից ստիպւած են լինում կաթիլ կաթիլ ուրիշից առնել:

Բանւոր դասակարգի աշխատաւոր ձեռքերից գանազան հարստութիւնների ահագին գետ է հոսում:

Նա ճիւղաւորւում է հազարաւոր գետակների և ճանապարհին բաւականութիւն է տալիս անթիւ անգործների. ու այդ նրա համար միայն, որովհետեւ նրանք սեպհականութիւն ունեն, իսկ բանւորը ոչ. սեպհականութիւն, որը ստեղծել է նոյն բանւորների ձեռքերով ու կամաց կամաց խլել նրանցից:

Կապիտալիստները ու նրանց պոչ հազար ու մի գիտնական և ոչ գիտնական աման լիզողները աշխատում են համոզել բոլորին, որ յաւելեալ արժէքը գոյութիւն չունի:

Նրանք այդպէս են ասում, որովհետեւ այդ կարգերը իրենց համար ձեռնառու են: Այդ պայմաններում ամբողջ մեղրը իրենց է բաժին ընկնում, բացի մի քանի չնչին կաթիլներէից, որը տալիս են բանւորին, որպէսզի քաղծից չըմեռնի ու կարողանայ էլի աշխատել իրենց համար:

Յաւելեալ արժէքը գոյութիւն ունի ու եթէ նա չլինէր, չէր լինիլ և զանազան անհատների պատկանող այսպիսի հսկայական հարստութիւններ, չէր լինիլ և այսքան անծայր աղքատութիւնը, երբ մարդիկ քաղծից ձգում են իրենց ջուրը, կամ թէ չէ վզներին օղակ հագցնում:

Ներկայ ամբողջ հասարակութիւնը, ամբողջ կառավարչական կազմը պահպանւում է յաւելեալ արժէքով. նրանով ապրում են, նրանով կերակրւում:

Յաւելեալ արժէքը կ'չքանայ այն ժամանակ միայն, երբ կ'վերջանայ արդիւնաբերութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը, այսինքն երբ հողը, ֆաբրիկան, գործարանը, մեքենաները և այլ աշխատանքի գործիքները կ'ընկնին աշխատաւորի ձեռքը ու կ'դառնան ընդհանրութեան և ոչ թէ ուրիշի աշխատանքով ապրող առանձին անհատների սեպհականութիւն: Այն ժամանակ ամեն

մէկը կաշխատի իրեն համար և ձրիակերներին ոչ ոք ստիպւած չի լինի կերակրել:

Աշխատանքը պարտաւորեցուցիչ կ'լինի բոլորի համար և բանւոր ժողովուրդը կազատւի իւր կեդեքիչներից:

Եւ բանւոր ժողովրդի ազատագրման հետ կազատագրւի և ամբողջ մարդկութիւնը: Բոլորն էլ կ'լինեն հաւասար ու ազատ:

Վ Ե Ր Ջ





47
30

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Մրաւեան. Դաշնակցութեան կրիզիսը 15 Կ.
- 2) Լեւո. Ինչ են ցանկանում սօցիալիստները . . 3 Կ.
- 3) Րիսարդ. Ինչու ենք անջատում Դաշնակ-
ցութիւնից 5 Կ.
- 4) Աշխատաւորի կրքերը 3 Կ.
- 5) Րիսարդ. Ազգութիւն և դատակարգ 15 Կ.
- 6) Կեղ'մեն. Ինչպէս է ստացում շահը և ինչպէս
զիջում հարստութիւնը . . 10 Կ.

Շուտով լոյս կը տեսնի.

Զեմկեակ. Ինչպէս են կուտ գիւղացիք հողի և
ազատութեան համար.

